

ԲԱԺԱՆՈՐՂԱԳՐՈՒԹԻՒՆ

Նշխարիչ համար	
Տարեկան	10 ձր.
Վեցամսեայ	5 »
Էրասմուսի համար	
Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Ամերիկայի համար	
Տարեկան	2.50 ժր.
Վեցամսեայ	1.25 »

ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

ՇԱՐՇՈՒՄ

Նամակ եւ դրամ դրկել
 Խմբագրութեան հասցին

—

Редакция на вестникъ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjoum»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

Գրութիւնք եւ չեմ տրուիր
 (ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ՝ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՉԷԶՈՔ ԱԶԳԱՍԵՐՆԵՐ

Տխուր է տեսնել թէ վերջերս մեր մէջ երեւան եկան կարգ մը ազգասէրներ, որոնց բոլոր հայրենասիրական գործունէութիւնը կը կայանայ չէզոք մնալու մէջ։

Եւ այդ չէզոք ազգասէրները նոյնիսկ ժողովրդական խաւերու մէջ մուտ գտան այնպիսի ժամանակ մը, ուր հայութիւնը աւելի պէտք ունէր զուտ ազատասիրական բարձր կորովի մը։

Երբ պահ մը կարծուեցաւ թէ ազատութեան փրկարար արշալոյսը մօտ է Հայկական մթադնած հորիզոնը լուսաւորելու, ամէնքը միաբերան գոչեցին. «կեցցէ՛ յեզափոխութիւնը»։

Երբ Պոլսոյ վեց դեսպանները տենդոտ գործունէութեան մը մէջ՝ ծրագրեր կազմելու և ստորագրելու վրայ էին, յեզափոխական էին ամէնքն ալ։

Երբ Զէյթունի ամրակուռ ժայռերուն վրայ կը ծփար Հայ ազատամբի յաղթապան զրօշը, սգեւորուած էին ամէնքը, անանց բացառութեան։

Սակայն երբ եկան արիւնի և սովի մահաշուք օրերն, աւեր և մահ տիրեց Հայաստանի մէջ, այն ատեն երեւան եկան նաև «չէզոք ազգասէրները»։

Բայց մեր հայրենիքը, իր ամենէն դժբաղդ օրերուն մէջ ամէն անգամէ աւելի լաւ պէտք է որոշէ զազափարի անձուրաց զինուորները՝ կեղծիքի փառամոլ դասալիքներէն։

Որովհետեւ այժմ մեր մէջ նոյն իսկ դրագէտներ կան, որոնք երբեմն յեզափոխական էին, բայց հիմա առանց կարմրելու կը փսփսան ժողովրդի ականջին. «անկցի յեզափոխութիւնը»։

Այդ ողորմելիները կուզեն հաւատացնել թէ մեր բոլոր շարիքներուն պատճառը յեզափոխութիւնն էր։ Մոռացութեան կը դատապարտեն այն սկզբնական պատճառները, որոնք առաջ բերին նոյնիսկ յեզափոխութիւնը, որոնց ազդեցութեան տակ ծնաւ հայ յեզափոխականը։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«Մարդասիրութեան և իրաւունքի» վեհ սկզբունքներու անունով միջազգային վեհաժողով մը գումարուած է Լահէ, հասաւտելու համար համաշխարհային խաղաղութեան մը լայն հիմքերը։

Մեր ազգերը, դարուս քաղաքական մեծագոյն ոճրագործութեան այդ զոհերը, հակառակ այն անգութ սկեպտիկանութեան, զոր կը ներշնչէ իրենց արիւնալի պատմութիւնը, պիտի կարենային յուսալ թէ Լահէյի վեհաժողովը՝ հաւատարիմ մնալով իր մարդասիրական առաջադրութեան, որուն հաւաքագան օրկանը հաշակուեցաւ, պիտի զբաղի նաև իրենց բազմազան, քանի որ անկարելի է այդ հաշտարար նպատակին իրագործումը, առանց արդար լուծում մը տալու բոլոր այն խնդիրներուն, որոնք առաջ եկած են բիրտ ուժին յաղթանակէն։

Սակայն վեհաժողովը հպատակելով այնպիսի նկատումներու, որոնց տրամաբանութիւնը հիմնուած է շանթոյ բռնաբարումին վրայ նոյն այդ վեհ սկզբունքներու, որոնք պատճառ եղան անոր գումարուելուն, որոնց շնորհիւ իր զբաղումներու պաշտօնական ծրագրէն մեր ինդիլը—խաղաղութեան յաւիտենական վտանգը, միանգամայն իրենց վերապահելով իրենց օրինական կացութիւն մը հաստատելու իրաւունքը։ Կացութիւն մը, որու վաւերացումը իրեն մէջ կը պարփակէ մահուան վճիռ, զիտակցաբար արձակուած երկու բազմատանջ ազգերու կեանքին դէմ։

Լահէի ժողովին այս գոգոթիջ վարմունքին հանդէպ, նոյնանրման դժբաղդութիւններու և նոյնանման ինքնապաշտպանութեան հարկին տակ միացած, մենք կը բարձրացնենք այսօր մեր ձայնը, ո՛չ մեր տառապանքները բարեկիրթ աշխարհի առջեւ փռելու և ոչ ալ մեր ազատութեան դատ փաստաբանելու համար։

Մեր բազմազան ողբերգական հաշակը կը փրկէ զմեզ մեր կացութեան բոլոր սարսափները թուելու այդ ցաւագին պարտականութենէն. իսկ մեր ազատութեան դատը արդէն վաղուց շահած ենք մենք մարդկութեան ընկերային խղճի դատարանին առջեւ։ Մենք մեր ձայնը կը բարձրացնենք միմիայն մատնանիչ ընելու համար իրաւաբանական այն ճշմարիտ դատաբանութիւնը, որ կը դարձնուի մեզ դէմ հանդիսաւոր սկզբունքներու լուսավայլ քօղին տակ, և յայտարարելու համար հասարակաց լուսաւորեալ կարծիքին առջեւ. թէ Լահէյի վեհաժողովին որոշումները զուրկ պիտի ըլլան յաշտ մեր, ուրէ պարտաւորեցուցիչ բնութիւն ունենալէ մեր երկու մարտիրոս ազգերուն համար. քանի կը հեծեն անոնք բռնակալ և նենգաւոր կառավարութեան մը լուծին տակ, որը ամենէն հզօր ձայներով պախարակուած և ներկայ քաղաքակրթութեան փառքին վրայ զղուելի արատ մը հաշակուած է։

Մեր արիւնալի անցեալը, անթիւ վայրագութիւններու և բռնաբարումներու վախէն սրտատրոփ ներկան, մեր ահարկու ապագան, որու հեռանկարներուն մէջ սոսկալի արհաւիրքներ կը պատրաստուին անպատիժ մնալու հանդարտութեամբ և Սուլթանական արիւնծարաւ ներշնչումով, միացած՝ մեր ընդհանուր պայքարներէն մեզ համար կը ստեղծեն սրբազան պարտականութիւն մը, որուն հնազանդել ոչ ոք կարող է արգիլել մեզ. որովհետեւ կայ հզօրագոյնին կամքէն աւելի զօրեղ իրաւունք մը—գերութեան շղթաները խորտակելու համար գերիներուն ունեցած անխղի իրաւունքը։

Մենք բնութեամբ խաղաղասէր, հանդարտ գոյութեան մը ձգտող ազգեր, նուիրուելու համար մեր կենսական ուժերու խաղաղ զարգացման, լուսազոյնս պիտի գնահատէինք այդ վեհաժողովի առաջադրութիւնը, եթէ

—)(—)

այդ «խաղաղութիւնը» չլարթեցընէր մեր մէջ քաջալերուած շարքերու տխուր պատկերը, և, եթէ նա այսօր հանդիսաւոր նուիրագործուէր չըլլար ամօթալի ստրկութեան մը, որու գէմ մինչեւ մեր վերջին ուժերը կուրի կը հրամայէ մեզ մեր գոյութեան և արժանապատուութեան վեհ պարտականութիւնը:

Բարսուգոյն Մա- Հայ Յեղ. Դաշ. կեղոնակաւն Կոմիտի անդամ ժողով (ԿՆԻԲ) անու ժողով (ԿՆԻԲ)

1/13 Յունիս 1899

ՕՏԱՐԸ ԹՈՂ ԽՈՒԻ

«Լ'Առմէնի»ի մէջ Մարտէլիայի «Սէմաֆօր» թերթից արտատրուած է Պօլսական մի հետաքրքիր թղթակցութիւն, որից մենք քաղուած ենք մի կտոր վերաբերեալ Պօլսի հայ բարձր դասակարգին, և Օրմանեան էֆէնտու հեռագիրը՝ ուղղված «խաղաղութեան ժողովի» նախագահին:

«Հայ հասարակութեան բարձր դասակարգը կազմուած են՝ բանկերները, հարուստ վաճառականները, և կառավարութեան բարձր պաշտօնեաները, որոնց, քան տարի առաջ, մեծ ներսէս պատրիարքը հրապարակաւ պախարակուած էր անձնատէր և հայրենասիրութիւնից բացարձակ զուրկ լինելու համար: Սրանք ամէն հնար և ամէն ցած

միջոց գործ են դնում իրանց անձնուիրութիւնը՝ գէպի թուրք կառավարութիւնը հաստատելու համար. և եթէ սրանից կախված լինէր, վաղը հայկական հայրենասիրական ընկերութիւնների որդեգրված բոլոր անդամներին ձեռքով ոտքով կը յանձնէին թուրք կառավարութեան».

ասում է «Սէմաֆօր»ի թղթակիցը: Լսեցէք և Օրմանեանի հեռագիրը— «Պատրիարքարանը ոչ մի տեղեկութիւն չուներ այն լիազօրութեան մասին, որով Չերաղը յաւակնում է ներկայացնել իր հայրենակիցների բողոքը. եթէ այդպիսի մի բան լինէր, պատրիարքը, հայ հասարակութեան քաղաքական պետը, անպատճառ պէտք է գլխենար: Թուրքիոյ բոլոր հայերը միշտ Ն. Կ. Բ. Սուլթանի հաւատարիմ հպատակները են եղել, և պախարակել են թուրք կառավարութեան գէմ եղած բոլոր թշնամական ցայցերը»:

Ահա ձեզ, ընթերցող, օտարականի կարծիքը Պօլսի բարձր կոչված դասակարգի մասին, որին մենք «ամենափաստակարարը» ենք համարում և Օրմանեանի հեռագիրը, որի համար նրան պախարակեց «Շարժում»ը: Հիմա ձեզ ենք թողնում դատել և հասկանալ թէ որչափ վատ են նրանք, որոնք «Շարժում»ի գէմ այս դասակարգի և այս պատրի-

արքի համար սրիկայական արշաւանք են սկսել:

ՎԱՐԴՕ

ՕՐԻԱՆ ԽՆԴԻՆԵՐ

Քննարկները. — Մի գարնանայի բարոյակալութիւն. — Կրկին «յիֆ պատրիարք»:

Առհասարակ քննութիւններ անել մանրիկ երեխաների համար՝ յիմար բան է. Պէտք է վերջացնել այդ փաստակար սովորութիւնը: Քննութիւնների հրապարակային, հանդիսաւոր ձեւը փաստ է երեխաների առողջութեան՝ նրանք պարտաւոր են 2—3 շաբաթ առաւօտից երեկոյ անդադար աշխատել. իսկ այդ երեխայի համար անպայման փաստ է: Նա փաստ է երեխայի մտաւորի համար, որովհետեւ երեխան ստիպուած է կարճ ժամանակում կրկնել ու տեղաւորել իր խելապատակի մէջ բազմաթիւ անուններ, թւեր ևւայն և 20—25 օր լարել իր հոգեկան բոլոր կարողութիւնները: Նա փաստ է և երեխայի բարոյականի համար... Այս նրբութիւնների վրայ երկար կանգ առնել չարժէ. ով մի քիչ ծանօթ է մանկավարժութեան՝ կը հասկանայ ասածներս ճշմարտութիւնը:

Բայց քննութիւնները մի օգուտ միայն ունին: Նրանք բա-

ւարարութիւն են տալիս ուսուցիչների սնամաուութեան: Ես այսպէս ու այսչափ լաւ եմ սովորեցրել իմ սաներին: Այս է միակ արդիւնքը:

Այս տարի Վառնաի ներկայ ուսուցչական խումբը նոր էր տեղիս համար: Քննութիւններով, որքան հնար էր, տեսանք նրանց արդիւնքը: Եղել են հայոց լեզուի, բնագիտութեան, ընդհանուր աշխարհագրութեան, ձեռագործի և մասամբ թւաբանութեան քննութիւնները: Բոլորն էլ ընդհանրապէս լաւ էին: Ձեռագործից ես բան չեմ հասկանում, չեմ էլ դատում. իսկ միւս առարկաները խիստ բաւարար էին: Միայն խորհուրդ կը տայինք թւաբանութեան ուսուցիչ Պ. Սիրաքին, աւելի ուշք դարձնել աշակերտի ուղեղի զարգացման վրայ, քան մեքենական գործողութիւնների վրայ:

Այս տարի ծանօթացանք մեր ուսուցիչների արդիւնքի հետ. հետեւեալ տարի կը պահանջենք որ քննութիւն չանեն: Դրա փոխարէն տարւայ մէջ շատ շատ կը յաճախենք դասերին, կը հետաքրքրուինք դպրոցով. ծնողական ժողովներ կը կազմենք և դպրոցի ու ժողովրդի մէջ մի զօրեղ կապ կը հաստատենք:

Այդպիսով այլեւս փաստակար քննութիւնների պէտքը չենք ունենայ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՆՈՒՋԱՐԸ

Բուրգարիոյ Թ. քաղաքի եւ ընկած թաղերից մէկում: մի փոքրիկ տան խեղճուկ սենեակի թրքական տախտի մի ծայրին, համեստ բայց մաքուր անկողնի մէջ պառկած էր մի ութ տարեկան հրաշալի տղայ: Երեստան սաստիկ ջերմ ունէր. տաքութիւնը քառասուն աստիճանը անցնում էր. նա երբեմն խեղդվում, հազիւ շնչում էր. երբեմն էլ իրան կորցրնում, ցնցվում եւ իր այրվող թաթիկներով ուղում պատուտել իր շապիկը ու վրաի բարակ վերմակը: Մանկան կողքին, գլխից մօտիկ, թախտի եզերքին տեղաւորվել էր մի մանկամարդ կին, երեստան մայրը: Նա իր գորովով լի աչքերը մերթ ուղում էր մանկան այրվող գէմքին, մերթ գէպի դուռը: Երբեմն էլ ականջն էր ուղում գէպի փողոց եւ ուշի ուշով լսում: Պարզ էր որ տիկինը սպասում էր մէկին: Սպասվողը ուշանում էր, մանուկը տանջվում. իսկ յուզված ու խոզված տիկինը աչքերից արցունքի խոշոր եւ այրող կաթիլները կիզել գնդակների նման վար էին հոսում նրա այտերի վրայով և խանձում նրա քնքուշ մորթը:

Վերջապէս դուռը բացվեց և մի մշեկի տարեց մարդու հետ սենեակ մտաւ մաքուր հագնված, ձուածեւ եւ նուրբ գէմքով, շէկի վրա մի երկնասարդ: Նա իր շապոն հանեց,

աթոռ կամ կախելու տեղ զուր փնտռելուց յետոյ՝ մօտեցաւ տիկնուջը բարեւեց ևւ սսեց:

— Ի՞նչ կայ, տիկին Աշխէն:

— Արշակս, տօքթօրս, Արշակս, միտուճար դաւակս սկար է, կը մեռնի, կայրի. ազատէ, կաղաչեմ: Տիկին Աշխէնը էլ չը կարողացաւ շարունակել: Սկսեց հեծկլտալ, խեղդվելու չափ: Մինչեւ այդ ժամանակ տանջվող մօր լարված նետրոները էլ չը դիմացան:

— Քիչ մը ջուր խմեցէք տիկին, ջանացէք հանգստանալ, որ ես կարողանամ Արշակին լաւ մը քննել: Ձէ որ պէտք է գանի ազատել:

Արշակի անունը, նրան ազատելու միտքը տիկին Աշխէնին իսկոյն խաղաղեցրին եւ նա շնչալով սսեց:

— Այո, տօքթօրս, ազատենք Արշակս:

Բժիշկը մօտեցաւ հիւանդին. սկսեց բժշկական սովորական քննութիւնը, զննեց երակը, կուրծքը, չափեց տաքութիւնը, ուշի ուշով, առանց շտապելու եւ վերջացնելուց յետոյ, զւարթ գէմքով դարձաւ գէպի տիկին Աշխէնը եւ հաստատուն ձայնով սսեց:

— Ոչինչ կայ, տիկին. բոլորովին հանգիստ եղէք. տղան մտած է. ուրիշ բան մը չունի. վտանգ մը չը կայ: Աղէկ որ ժամանակին կանչեցիք:

— Օխ, ուրեմն Արշակս չը պիտի մեռնի. միտուճար դաւակս պիտի ապրի: Պիտի ապրի ոչ ինձի նեցուկ ըլլալու համար. ոչ, վրէժ լուծելու համար:

— Ի՞նչ վրէժ, տիկին. դարմանալով հարցրեց բժիշկը:

— Ի՞նչ վրէժ, դեռ կը հարցնես: Հօր վրէժը, որուն թուրքերը աչքիս առջեւ կտրտեցին. հարազատ եղբայրներուս վրէժը, որոնց փողոցին մէջը գաւազանի հարածներով մեղցուցին, իմ վրէժս, որ անմեղ դաւակին աչքի առջեւ, կտրտած ամուսնոյս դիակին քով, պատիւսաղարտեցին: Վերջապէս ամբողջ հայ ժողովրդին վրէժը, որ շարունակ այդ դազաններու ձեռքով կը մորթի: Եւ ես թոյլ կինս չկրցայ ու չպիտի կրնամ այդ վրէժը լուծել: Միտուճար տղաս այդ վրէժի համար պիտի մեծցնեմ. եւ զանի պիտի ազատես, այնպէս չէ՞ տօքթօրս:

Այս խօսքերը արտասանած միջոցին տիկին Աշխէնը բոլորովին փոխվել էր. նա կարծես առժամանակ մոռացել էր Արշակի հիւանդութիւնը. սեւ ու խոշոր աչքերը մի տարօրինակ կատաղութեամբ էին փայլում. իսկ ցամաք շրթունքների արանքից բառերը դուրս էին թոչուտ չոր չոր, հատիկ հատիկ: Բժիշկը ապշած նայում էր այդ հայ մօր վրա, որը վրէժի ծայրաւից պայտակած, մտածում է իր միտուճար դաւակը մեծացնել վրէժի զգայունքով. միայն վրէժի համար: Բժիշկը Յափժշտակած այդ եղտիկ հայ կնոջով գրեթէ բացականչեց:

— Կսքանչանամ տիկին: Այո, մեր դաւակները վրէժի սիրութեան ոգով պիտի մեծցնենք այսուհետեւ: Չկայ հայ մը որ թուրքէն փնտրէ կրած չըլլայ: Թշնամին ընդհանուր է. մենք ալ ընդհանուր վրէժխնդրութեան ծարաւով պիտի ապրինք: Ապրիլը բաւական չէ. պէտք է որ աշխատենք յագեցնել այդ ծարաւը:

— Այո, տօքթօրս, ընդհանուր բայց ամէն անհատ նախ թող իր վրէժու մասին խորհի. որոշէ ամէն զոհողութեամբ այդ վրէժը լուծել: Եւ ընդհանուր վրէժխնդրութիւնը այդպիսով ինքնիրեն կաճի, կը զարգանայ և օր մը կը պայթի: Ես մը Արշակս վրէժ չ'նշալով պիտի մեծցունեմ: Հայր, մայր, երկինք եւ Աստուած խօսքերու տեղը վրէժ եւ միայն վրէժ պիտի դրօշմեմ անոր մանկական սրտին, հոգուն եւ մըտքին մէջ, իմ շնչովս, համբոյրեալովս վրէժխնդրութեան թոյնով պիտի վախակեմ անոր արիւնը, ամբողջ էութիւնը:

Բժիշկը բոլորովին զմայլված՝ մի քանի վայրկեան ոչինչ չը կարողացաւ խօսել: Վերջապէս ճակատը չփելով, կարծես իրան մի գիւթող, հմայող զօրութիւնից ազատելու ճիգեր գործ դնելուց յետոյ, սսեց:

— Այո, տիկին: Բայց ժամանակը ուշ է. ես դեղագիրը գրեմ եւ երթամ:

Այս ասելով նա շտապով գրեց դեղագիրը. իր դողացող ձեռքով սեղմեց տիկին Աշխէնի ձեռքը և շտապով դուրս եկաւ սենեակից...

Տիկին Աշխէնը նրան մինչեւ սենեակի դուռը ճամբայ դնելուց յետոյ վերադարձաւ, շրթունքները սեղմեց Արշակի տաք ճակատին եւ շնչաց:

— Այո դաւակս, պիտի ապրիս, մեծնաս, որ վրէժ լուծես անոնցմէ, որոնք անպատեհեցին քեզ կաթ ու ող կուրծքը եւ անոր նման հաղաբարտ հայուհիներու կուրծքեր...:

ՎԱՐԴՕ

Ձարմանալի՝ բարոյականութիւն ունին մի կտոր հացի համար թերթ հրատարակող տղէտ, չարչի արարածները:

Մի բաժանորդ շահելու համար նրանք այսօր պաշտպանում են Օրմանեանին, վաղը հայհոյում: Այսօր մածունը նրանց համար սեւ է, վաղը՝ ճերմակ, նայելով թէ բաժանորդ աղաները ի՞նչ են պահանջում... Կամէլիօն կենդանու պէս օրը հարիւր գոյներ են փոխում, հարիւր դիմակներ հագնում:

Այդ դեռ տանելի է. դա կարող է ծայրայեղ տգիտութեան, անսկզբունք անկրթութեան վերագրել: Իսկ նրանց գարշելի բարոյականութիւնը արդէն չափն ու սահմանն անցնում է: Երբ ուսուցչական ներկայ խումբը գրում էր շարչիներ թերթում՝ այդ ուսուցիչները հիանալի, հրաշալի էին. իսկ երբ ուսուցիչներ թարոյական զգացմունքները վրդովւեցան խմբագիրներ շարչական աղտոտութիւնից և հեռացան՝ ստամոքսի գերի խմբագիրները ամէն հնարաւոր միջոցներով դիմեցին ուսուցիչների «տղի տակը սպայոն դնելու»... Մի ուրիշ դէպքում այդ գունահիկ խմբագիրները մտան այս ու այն պատուաւոր մարդու ընտանեկան կեանքի մէջ. մեղք ու դաւաճանութիւն համարեցին նրա ամուսնանալը... Մի այլ դէպքում կեղծեցին, աղաւաղեցին մի քանի յօդաւածների մտքերը... մի այլ դէպքում մի երկու անձերի վարկը ուղեցին կոտորել որոշ կուսակցութիւնների առաջ... Ո՞րն ասեմ. մնում է հրապարակային գողութիւն անել և մարդ սպանել, եթէ ոչ բոլոր հնարաւոր անբարոյականութիւնները թոյլ են տւել... Ու գրանք, այդ շարչի խոզարածները խմբագիր են... Վա՛յ հայոց ազգի գլխին, եթէ նրա առաջնորդ խմբագիրներն այդքան ողորմելի, այդքան անբարոյական են...

Օրմանեանի հեռագրի խնդիրը պատուեց շարչիների գարշելի դիմակները... գնչուական երկար ականջները երեւացին կեղծ խոհեմութեան, զգուշութեան ու անկողմնակալութեան դիմակի տակից...

Այժմ Եւրոպական թերթերն էլ սկսեցին տեղեկութիւններ տալ չիք պատրիարքի հեռագրի մասին:

ԴԱՍՊԱՐ

ԺՈՂՈՎՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԻՐԸ

Քաւստ-Քաթիպան

Գրեց ԲԱԲԱ-ԴԱՍՊԱՐ:

Պուլկարիս մէջ գինը 50 սանթիմ, իսկ արտասահմանի համար 60 սանթիմ:

Ցանկացողները թող դիմեն Շարժումի խմբագրութեան:

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ԹԷ ՇԱՆՊՈՐՏՈՒԹԻՒՆ

Յեղափոխութիւնը այն ատեն միայն սուրբ, նուիրական ու պաշտելի է, երբ առանց շահագործութեան է:

Տեղույս խեղճ ժողովուրդը շահագործող սղորկային տիպարներու շահագործութիւնը երբ Շարժումի էջերու միջոցաւ հրապարակ ելաւ, այդ սղորկները, իրենց անցեալ և ներկայ աններելի զեղծմանց շարքն սքողելու համար՝ այժմ իրենց շահագործութիւնը ուրիշ միջոցաւ ի գործ դնելու ձեռնարկած են: Անցեալ կիրակէ, երբ տեղույս նոր թագխորհուրդ մը կազմակերպելու համար քուէարկութիւն պիտի ըլլար, հրաժար եալ ատժ. թագ. խորհրդոյ մի քանի անդամներն տեսնելով թէ ժողովուրդն ալ իրենց շար արարքներուն առթիւ անհաշտ լինումի աչքով սկսաւ նայել իրենց վրայ, փափաքելով կրկին մնալ թաղականութեան մէջ և ժողովրդականութիւն շահել, շարթ օրուրն է կը պատրաստեն հարիւրաւոր քուէներ և կիրակի գաւառացուց սրճարաններն շրջելով. խեղճ պարզ մարդիկները կը համոզեն, քուէթղթերն կը բաժնեն ատոնց, որ երթան քուէատուփը ձգեն, որպէս զի դարձեալ իրենք շահելով մեծագոյն քուէն, խորհրդոյ անդամ լինին և կրկին ազգին գլխուն փորձանք ըլլան: Սակայն այդ աշխատութիւնը ևս ի դերեւ ելաւ. աշխուրջ հսկողութեան առթիւ, ընտրուեցան հրապարակի վրայ օրինաւոր դիրք գրաւողներէն. «բացի մէկ երկու անձնաւորութիւններէն»:

Յիշեալ ծանօթ տիպարներն, կարգ մը շոշորթներով միասին, հրապարակ իջած, իրենց աննպատ եղած ընտրութիւնը տապալելու համար գառան մորթով ժողովրդեան մէջ մտնելու միջոց իր գտնեն օգային ծրագիրներով. ինչպէս նիւթապէս այժմ ևս բարոյապէս զանոնք զէպի անգունը գահավիժելու: Անս ինչպէ՞ս. ժողովուրդի սրտի նուիրական ու պաշտելի անունն—յեղափոխութիւնը—բնաբան բռնելով իրենց կատարարկեն թէ «ահա ժամանակն է գործելու. պէտք է միթիւն մը կազմել, ամէն տեսակ կուսակցական անուններ մէկ կողմ ձգելով, հարիւրաւոր մարդիկ զէնքի ներքեւ առնուլ և հայրենիք մտցնել:

Շատ լաւ առաջարկութիւն: Բայց առաջարկողք ի՞նչ տիպար են. խեղճ ժողովուրդ, այդ աղուէսային խորամանկութենէն կըսկսի խարուիլ. և ամսոյս 14ի գիշերը սրճարաններէն միոյն մէջ միթիւն մը կը ըլլայ, ուր բաւական մարդ կը հաւաքուին, և իրենց զէմ լարուած ու առիւծ կարած ժողովուրդն գառնուկ կը գառնայ այդ քողարկուած անուան—յեղափոխութեան զէմ:

Սարեբայ պարագլուխները կը կարծեն թէ իրենց այդ թագուն նպատակը չէ պարզուած: «Կետիւնը ականջ ունի» կըսէ ժողովրդական առածը. խոհուն և լուրջ անձնաւորութիւնք յիշեալ հաւաքման ցաւալի հետեւանքը ի նկատի առնելով, մէկէն ի մէկ սկսան հրապարակաւ այդ քողարկուած դաւաղութիւնը երեւան հանել, այդ ինքնակոշ շոշորթ պարոններու անցեալը ցոյց տալով թէ. «փուշին թուղ և տատակէն խաղող յուսալ» կարելի չէ. հետեւաբար այսպիսով ալ չկրցան նպատակունեն հասնիլ, և հաւա-

քունն ալ, որ դաւաճանական ու խաբէական էր, գոյութիւն չունեցաւ: Պարոննե՛ր, փոխանակ խուլ անկիւններու մէջ միութիւն անուամբ օգային ծրագիրներ պատրաստելով ժողովուրդն «որպէս թէ չտկելու նպատակաւ» խարել ջանալու, աւելի լաւ կընէք, եթէ նախ ինքզինքնիդ շակել, յղկել աշխատիք:

Մինչև ցայսօր օրն իրուն օրապահիկի մը համար չարաչար աշխատող գործաւոր դասակարգը նիւթապէս մինչև գերեզմանի սէմը հասցուցիք, այժմ կուզէք զայն բարոյապէս մեղցնել. անխիղճներ: Բաւ է. թողէք ժողովրդեան կամքին. ժողովուրդը կրնայ իր վարիչ մարմինը որոշել, որ իր սուրբ և նուիրական ամէն մէկ բանին վրայ կը գուրգուրայ:

Յեղափոխութիւնը ունի իրեն համար որոշապէս գծեալ ծրագիր և գործադրող մարմին. ինչ որ հարկն է ու կը յառաջացնէ. և որ ցարդ ըրած է: Մի աշխատիք շահագործել յեղափոխութեան անունով. մի նսեմացնէք ազգին յարգելի ու ազատարար գործը. և մի պղտորէք ժողովրդեան սիրտը:

Եթէ շարունակէք ձեր ընթացքը պիտի աշխատինք ամբողջովին ձեր դիմակը վար առնել, նոյնութեամբ ցոյց տալ ժողովրդեան և հասկցնել թէ որպիսի տիպարներ էք, կատարեալ կանգոններ, կարուելու նետուելու արժանի:

Պարոննե՛ր, ո՞ւր էիք մինչև հիմա. քանի՞ սանդիմ գոհեցիք յեղափոխութեան. ժամանակին ինչո՞ւ համար հակառակ էիք և ձեզմէ ու՛մանք մինչև իսկ ամէնէն ցած միջոցներու գիմեցին, «մատնութեան»: Այժմ ի՞նչ բանէ թելադրուած դիմակի ներքեւ կուզէք մտնել. կամ թէ ո՞ր ուժի կամ ո՞ր զօրութեան ապաւինած էք որ հազարաւոր զօրք զէնքի ներքեւ առած հայրենիք պիտի մտցունէք: «Մինչև Պուրկազի նաւահանգիստը պիտի առաջնորդէք այդ բանակը, թէ միասին մինչև հայրենիք»: Բաւ է. մէկզմէկ գիտանք, հազիւ թէ կրնանք ապրիլ: Ի՞նչ է նպատակնիդ որ կաշխատիք մարդորսութիւնը յառաջ տանիլ: ժողովրդեան համար սուրբ և նուիրական անունաց հետ մի խաղաք հաճելի երեւնալու համար. մտքը ցէք ձեր ներքին աղտեղութիւնները և անկեղծ հայու տիպար կրելով ժողովրդեան մտեցէք:

ԴԻՏՈՂ

Պուրկազ, 18 Յունիս

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Լօրեհն-Մես, 14 Յունիս

Տեղույս օրուան նորութիւնն է Լահէի զէնքնակցութեան համաժողովը և այդ առթիւ Տ. Մինաս Չերազի գործունէութիւնը: Բայց թէ ո՞ւրկից դրդեալ կամ ի՞նչէ ստիպեալ Տ. Չերազ այսօր կը գտնուի Լահէի մէջ. արդեօ՞ք մեր Սարաճեան Սրբազանը հետաքրքրուած ու կարողացած է իմանալ թէ ոչ: Եթէ չէք իմացեր Հայր Սուրբ՝ առանց շիկնելու կարդացէք «Շարժում» և «Իրաւունք» թերթերը յայնժամ պիտի նկատէք պատճառը: Ընթերցողաց թող զարմանք չպատճառէ երբ բացատրեմ թէ մեր Հայր Սուրբը ի՞նչ քայլ առաւ

այդ մասին. տեղս, թուէս 10—12 շաբաթներ առաջ, ազգային ժողովէ մը վերջ (նախօրք անհատներէ թելադրուած) ժողովրդեան փափաք յայտնեց որ Ամերիկայի հայ գաղութն ալ քայլ մը առնէ այդ մասին և առաջարկեց որ տեղույս ժողովուրդը իր քուէն տայ Վեհ. Հայրիկի, որով նորին Սրբազանութիւնն ալ այսպիսի շատ մը քուէներ ստանալէ վերջ, կամ ինք անձամբ ներկայանայ և կամ պատուիրակ մը զրկելով՝ սեղանին վրայ դնել տայ հայկական հարցը:

Ասկէ վերջը մէկ ուրիշ անհատ մըն ալ նմանօրինակ թելադրութիւն մը ըրաւ պատրիարք հօր միջոցաւ գործելու: Մինչ այդ թելադրութիւններ կը լինէին, Հայր Սուրբ, ևս ապարդիւն նկատելով ուրիշ երկու առաջարկ դրի. խնդրին գործնական տեսակէտը կարեւոր նկատել և ապա աշխատիլ կամ տեղացուց հետ միանալով մեծ ժողովներ կազմել տեղային պատուիրակի միջոցաւ ի գործ դնելու և կամ բոլոր արտասահմանեան հայերս միանալով Տ. Մինաս Չերազը կամ բրօքէօսէր Տէր Թումայեանը երկուսէն մին պատուիրակ ընտրենք, որ ըստ կարելոյն աշխատին:

Մեր տիրացու ժողովուրդը ջախջախեց իմ առաջարկները. գրեթէ միաձայն քուէարկեցին կաթողիկոսի և Ս. Պատրիարք Հօր միջոցաւ ընելու: Խիզախ սրտեր պէտք էին լրջութեամբ խորհիլ և քուէարկել, որոնք կը ցաւիմ թէ խիստ հազուադիւրս էին:

Կարծեմ հիմայ կը տեսնէք Հայր Սուրբ, ձեր «իշխման խնդիր» սուլթանիյէ՞ն և իմ հայկական իշխմանիյէ՞ն երկունքուն որը ի գործ կը դրուի: Խնդիր չէ թէ ո՞ւր պիտի հասնի գործը և արդիւնքը. մենք աշխատութեան նայելու ենք: Տեսա՞ք, թէ՞ դուքն ենք չկրցող մտնող ինչպէս փառաւորապէս ժողովէն իսկ ներս կրցաւ մտնալ: Ժամանակը չէ որ հարցնեմ ձեզ, Հայր Սուրբ, ժողովը բացուած է. ի՞նչ կընէ Վեհ. Հայրիկը, և ի՞նչ կընէ Ս. Պատրիարք Հայրը:

Սասունի վարդերու ատեն շատ մը թախանձանքներէ վերջ, հազիւ հաճեցաւ Տիգրիսէն Բեթերսբուրկ երթալ որուն արդիւնքը ձեզ յայտնի է: Վարժարաններու խնդիրը դեռ հինցած չէ և դեռ ատով կայրին ու կը մրկուին յուսախար լինելու համար. իսկ Ս. Պատրիարք հօր նկատմամբ բաւ մը իսկ գրել աւելորդ կը սեպեմ: Բնական է թէ նմանն զնմանն սիրէ: Պարսկաստանը ապաւելուդ, որ բերնի ժամոց մը ըրած քեզ կը պարծիս և ատով կուզես թող փչել խեղճ ժողովրդին, ալ ժամանակը լրացած է: Ոչ, Պարսկաստան ապաւելու խնդիր չկայ. այստեղի աղտեղիք պիտի լինի անբարոյականացեալ երկտասար-

դուրիւնը յեղաշրջելով՝ բարի շրջան մը ներմուծել և գտնուած անչափահաս տղայոց իրենց մայրերնի լեղումը սովորեցնելու միջոցներ գտնալ, զանոնք օտարանալու մօտալուտ վտանգէն ազատել :

Կը ցաւիմ ըսել որ տեղիս «Հայրենիք» և «Տիգրիս» շաբաթաթերթերն գեռ իրենց խանձարուրին մէջ գտնուելուն համար, զիրենք անկարող կղզան կուսելու : Մարտնջող Տիար Ն. Էկինեանի մը պէտքը շուտով զգալի եղաւ : շատերու բերնէն լսած եմ որ անոր հեռանալէ վերջ : Տիգրիս իր գոյնը փոխեց : Միթէ՞ այդ պէս պէտք էր վարուէիք Պ. Էկինեան, կոտորելով ձեր գրիչը առանձնանալ դէպ «Գալիֆօրնեայ» : Եթէ տեղական թերթերը անզօր կը գտնէք կուսելու, միթէ՞ չէք գիտեր որ «Մշակ»ը ճիւղաւորուած է նաեւ Ամերիկայի բոլոր հայաբնակ քաղաքներու հայ սրտերը մշակելու համար, ինչպէս նաեւ «Շարժում»ը չնայած իր սուղ ժամանակին, շատերուն սիրելի գարձած է : Այս կոչը կը յուսամ պիտի բաւէ ձեզ նորէն հրապարակ գալու :

Ս. Գ. Պոյաճեան

Թրֆօ-Օֆնա, 16 Յունիս

Հայաստանի և Կիլիկիոյ սովը իր անագորոյն մանգաղովը կը հնձէ մեր երկրագործ ժողովուրդի կեանքը : Երկրագնտիս վրայ բարախող բոլոր առատագութ սիրտեր իրենց գթութեան դռներն կը բանան, միայն Ռուսներն հայն է որ անտարբեր կը գիտէ :

Ես պտտեցայ ամէն քաղաքները և գաղափարնին շօշափեցի : Կարծուածին չափ անտարբեր չեն : միայն զիրենք խրախուսող և սրտանց առաջնորդող պաշտօնական մարմիններ կը պակսին : Հին տգէտների համար խօսք չունիմ, որոնք լոկ իրենց մեռելներին վրայ ողբալ գիտեն : սակայն ի՞նչ կընեն քիչ շատ գրական աշխարհի ծանօթ երիտասարդներ (որոց անունները առ այժմ աւելորդ կը համարիմ հրատարակելու) :

Ի՞նչ կընէ Պօթուչանի հայութեան բարեկամ ծերունագրող Տ. Պօղոս քահանան և Պաքովի երիտասարդ քահանան, որը, գեռ անցեալ օրերը, նորընտիր նախագարը իր տունը հրախրելու և անոր հետը բանակցելու ճարպիկութիւնը ունեցաւ : Ահա ասոնց յարեւման մի քանիները չեն պակսիր Ռուսներնի մէջ :

Ի՞նչ կընեն թո՛ղ սկսին սովամահ Հայաստանի ալեխարշ տեսարանը կրկին ու կրկին նկարագրել և յունաց օրինակին հետեւելով, հայ գեղեցիկ սեռէն ամէն տեղ մէ՛յ՛մէ՛կ մասնաճիւղեր կաղ-

մեն, որոնք իրենց ձայնի գեղեցիկ շեշտերովը դուռնէ ի դուռ գթութեան դիմեն : Տեսնանք հայերէ զատ ուսմէններն ալ չի՞ պիտի մասնակցին :

Տեսնանք յուսահատների և բարբառնող խաչադողները կարծածին պէս ուսմէն կառավարութիւնը արգելքներ կը յարուցանէ՞ զթութեամբ լեցուած և գէպի իր եղբայրներին օգնութիւն ընող ժողովրդի մը :

Յովհաննէս Փայազեան

Գեւախ, 18 Մայիս

Սիրելի եղբարք, նախ ձեզ կը բարեւենք, իսկ թէ մեզ հարցնէք, վառք տիրոջը, անձերս ողջ է : Ձեր զրկած . . . ոսկին ստացայ բայց տուն չը հասցուցի : անմիջապէս սուրբը վճարեցի, ցաւալին աս է որ տուն պակասը չը կըրցայ տեսնալ :

Գեռ այդ ցաւէն չազատած, երկու ոտիկան եկան պահանջելու զինուորական տարեկան սուրբը : Գրեթէ ամէն հայաբնակ գիւղ պաշարման մէջ է : Օրական չորս հարկապահանջ կուզան : օրերով կը նստին, մեր ունեցած հացը կուտեն, գարին ձիւրուն կուտան : Արդէն գիտէք թէ շատերը վերին աստիճանի աղքատ են : Շատերն ալ հոս չեն : Ալ սիւտ չի դիմանար մեր քաջած աղէտներուն : Յորին պէս համբերո՞նք, թէ ի՞նչ կընենք : Ան ինչ սեւ օր էր որ ես ծնայ : Եղբարք օգնեցէք, թէ չէ մեր եղներն ալ կերթան : Գուք մեր սուրբերը գիտէք, ալ մենք ձեզմէ հագնելու և ուտելու համար չէ որ կուզենք : Գոնէ միջի աղատեցէք, Հոս մենք լսած ենք որ Վեհաժողով պիտի ըլլայ : Թէ լուր ունի՞ք, մեզ ալ իմացուցէք : Ախ Աստուած, մինչեւ երբ պիտի քաշենք : Հոս թուրքերը մեզ կը ծաղրեն, կը հայհոյեն ըսելով. «Տեսէք ձեր գլխուն ինչեր պիտի գան : ո՞վ կընայ մեզի բան մը ըսել» :

Տեսալ տեսալ խօսքեր կը դառնայ : տեսնանք ինչ պիտի գայ գլխունս : Փաշան հայերուս ցորէն տուաւ լեցուն գինով, կամայակամայ առինք : Եթէ ան ալ ասանկ չընէ մեր ցաւերը աւելի կը շատնան : Իե՛րբը միջակ է ոչ լաւ, ոչ վատ :

Ձեր նղբայր

ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԻԿ

Բագուի հարուստներէն մին Ե. Բուդաղեան վճռած է իր վրան առնել տեղին հայոց եկեղեցիին ծախքին մեծագոյն մասը : գուցէ և ամբողջը : Տաճարին նախագիծը պիտի պատրաստուի մայրաքաղաքի ճարտարապետներուն ձեռքով :

— Նոր Զուլայի օրիորդաց դպրոցին հանգանակութիւնը

չատ յաջող կերթայ : Առաջնորդը ինքը նուիրած է 1000 զրան : Ընդամենը հանգանակուած է 19000 զրան, նոր Զուլայի պէս պղտիկ քաղաքի մը մէջ : Դպրոցին շինութիւնը սկսելու պատրաստութիւնները կը տեսնուին յատուկ մասնախմբի մը ձեռքով :

— Տէր Գէորգ քահանայ Հիւրմիւզեան իր զարմանքը կը յայտնէ որ մինչեւ ցարդ տեղւոյս աւազերէցը իրեն չէ յայտնած կրօն : Ժողովին որոշումը իր դատապարտութեան մասին Այնիւնչ, տեղական թերթի մը ըսելով, այդ որոշումը իբր թէ արդէն յունիսի 5ին հաղորդուած է աւագերէցին :

— Մօտերս Թիֆլիս կայացաւ տեղական 1—2 կարգի վաճառականների ընդհանուր ժողով, աշնանը Թիֆլիսի մէջ բացուելիք առեւտրական դպրոցին հոգաբարձական խորհուրդի համար նախագահ և հինգ անդամներ ընտրելու : Ընտրութիւնը զաղտնիքուէարկութեամբ էր : Թէ նախագահը և թէ անդամները հայեր են, բացի մէկէն որ վրացի է :

— Կովկաս կը գտնուի հայագէտ Պ. Մառ հայոց և վրաց հին մատենագրութեան վերաբերեալ հետազոտութիւններ ընելու նպատակով :

— Կըսուի թէ Եգիպտոսի առաջնորդութեան ընտրելի Այվազեան եպիսկոպոս ընտրութիւնը յիտաձգուեր է և անոր տեղ ընտրելի նշանակել են Երէցեան և Գուրեան նորնծայ եպիսկոպոսները :

— Ճանիկի, Մուշի և Երզնկայի առաջ տեղապահ վարդապետներու պէտքերը յանձնուեր են Պատրիարքարանի :

Ատանայի թաղական խորհրդի անդամներէն Պղտիկեանները փափաք ունին Ատանայի մէջ որբանոց մը հաստատել գոնէ 20 որբ պահելու համար : Մասամբ իրենք յանձն առած են հոգալու, մնացածն ալ հանգանակութեամբ պիտի հայթայթեն :

— Թէհրանէ կը տեղեկացնեն թէ Շահին բժշկապետ Տօթթի թիրեաքեան սկսած է զբաղիլ Զանդիլ լեզուով, որ հայ բանասիրութեան և լեզուաբանութեան տեսակէտով մեծ կարեւորութիւն ունի :

Տօթթ. Ժառանգական խանութեան տիտղոսը ստացեր է :

ՆԱՄԱԿԱՍՏՈՒՓ

Մեր դորձակալներէն ու բաժանորդներէն իմբազրութիւնս կը խնդրէ փութացնել բաժնեգրներու առաքումը :

Մտիպեալ պիտի հրատարակենք չի վճարողներու անունները :

—)(—

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Տիար Յ. Չաքրեան ինձ պաշտօն յանձնեց խնդրել ձեզանից որ հաճիք հրատարակել ձեր թերթին մէջ ինչպատ իրեն կաղմակերպուած թատերական ներկայացման հաշուեցուցակը :

Յանուս Տ. Յ. Չաքրեանի անունս շնորհակալութիւն կը յայտնեմ վառնայի բարի երիտասարդաց և ամէն անոնց, որք հաճեցան օժանդակել իրեն այդ տկար ու հիւանդակին վիճակին մէջ իրենց աշխատութեամբ և գրամով :

Մ. Զգոնեան

Վառնա, 16 Յունիս

ՀԱՇՈՒՆՆԵՐԻ ԾՍԱԿ

ՄՈՒՏԲ	Լ. Ս.
Փոխարժէք ծախուած տոմսերու	220.—
Նուիրեցին Տիարք Ա. Ա., Պ. Փ. և Ս. Տ. 10ական ֆրանք	30.—
	250.—
ԵՆԻՔ	
Դերասանուհիին վճարուած	22.—
Զգեստներու վարձք	10.50
Սրահի վարձք	25.—
Տոմսերու տպագրութեան	2.—
Այլու այլ ծախք	8.—
Տ. Յ. Չաքրեանի յանձնուած	181.50
	250.—

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Աղջկանց կրթարանի տարեկան բերանացի հարցաքննութիւնք պիտի սկսին յառաջիկայ երկուշաբթի 28 Յունիս և պիտի աւարտին Յունիս 4ին :

ԵՐԿՐՈՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ի ՆՊԱՍՏ Վանայ Սոյնալեւոնու

Ժողովրդի ցանկութիւնով կը խաղացուի երկրորդ անգամ ՎԱՆԱՅ ՀԱՅԳՐՈՒԿՆԵՐ (սրբագրեալ), Յունիս 26ին, շաբաթ օրը, Անկէլ Սլավօֆի սրահին մէջ :

Գիները չափաւոր. 50 սանթիմէ մինչեւ 5 ֆրանք տոմսակներ :

Տոմսերը վճռուած է տուներ չըրկել : ցանկացողները կարող են գնել Տ. Յովսէփ Բարսամեանի վաճառատունէն :

Ելեւմուտքի վերահսկող յանձնախումբը բաղկացած է Տ. Տ. Տօթթ. Աթաբէկեանէ, Յ. Բարսամեանէ և Տիգրան Աճեմեանէ :

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՊԵՏՐՈՒՄԻ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, ինչպէս նաև պրօշիւռներ :

Գիները յոյժ դիւրամատչելի : Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին :

ՅԱՆՉՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՍԻԿ

Отговорникъ : А. СУКЯСОВЪ

Печати на „Взаимность“ Варна.